# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

**11 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆ**

**ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

11 հունիսի 2025 թվական

# ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Հերմոն Ավետիսյանը, Սամվել Գյուլամիրյանը, Սոֆիա Ոսկանյանը, Արտակ Աշիկյանը, Ռոբերտ Դերմոյանը, Արմեն Եփրեմյանը, Վարդան Խաչատրյանը, Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Հովիկ Հովակիմյանը, Սոկրատ Հովսեփյանը, Կարեն Ղազարյանը, Արմեն Մարգարյանը, Արտավազդ Մարգարյանը, Իշխան Սահակյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Սուրեն Մկրտչյան, Հրաչյա Հովհաննիսյան, Խորեն Ուստյան, Գոհար Հովսեփյան, Մերի Մելիքյան, Անժելա Գուլգուլյան, Անահիտ Խաչատրյան, Աննա Հովհաննիսյան, Արսեն Եփրեմյան, Նարեկ Գալստյան, Խորեն Հովակիմյան, Ատոմ Թադևոսյան, Վարդան Ավետիսյան, Վահագն Թարվերդյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը**

**Նիստը արձանագրում էր բաժնի պետի ժ/պ /2.1-11/՝ Անժելա Գուլգուլյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2025 թվականի հունիսի 11-ի հինգերորդ հերթական նիստի օրակարգը՝

1.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԺԵԼԱ ԳՈՒԼԳՈՒԼՅԱՆ/

1.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻՑ ԵՐԿՈՒ ՍԵՆՅԱԿ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ Վ.ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՀԵՆՐԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԱՆՈՒՇ ՍԵՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.6 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.7 ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.8 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.9 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՆՔՆԱԹԱՓ ՄԵՔԵՆԱՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/*

1.10 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՆԱՐ-ԴՈՍԻ 38/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏԱՆԻ ԲՆԱՍԵՐՆԵՐԻ ԿԱՅԱՆՆ <<ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ <<ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.11 «ՇԻՆՏՐԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ-77 ԿՈՊՃԱՅԻՆ ԱՎԱԶՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.12 ԴԱՎԻԹ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 116/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.13 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.14 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 13/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.15 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԵԿ ՎՐՈՒՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.16 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԵԿ ՎՐՈՒՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.17 ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶԱՏԱՐՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.18 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 124-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի և Արտաշատի համայնքապետարանի միջև 2025 թվականի ապրիլի 28-ին կնքված պետության կողմից ֆինանսական միջոցների հատկացման N25/1238-12001/1-ԱՇ, 2025 թվականի մարտի 06-ին կնքված 25/Ա-Կ-1 և N25/ՏՄ-3 պայմանագրերը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.
1) 28.50. 00 գործառական դասակարգման / օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի վարչական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ/ 900415003020 գանձապետական եկամտային հաշիվն ավելացնել 63 350 420 /վաթսուներեք միլիոն երեք հարյուր հիսուն հազար չորս հարյուր քսան /ՀՀ դրամով.

2)11.01.02.51 գործառական դասակարգման/ վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հոդվածն ավելացնել 46 562 720 /քառասունվեց միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր քսան / ՀՀ դրամով.

3) 09.01.01.51 գործառական դասակարգման /Նախադպրոցական ուսուցում/ 4753 հոդվածն ավելացնել 9 320 000/ինը միլիոն երեք հարյուր քսան հազար /ՀՀ դրամով.

4) 09.01.01.51 գործառական դասակարգման /Նախադպրոցական ուսուցում/ «Արտաշատ համայնքի Վ.Արտաշատ գյուղի «Լուսնթագ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 1 123 000/մեկ միլիոն մեկ հարյուր քսաներեք հազար /ՀՀ դրամով.

5)09.05.01.51 գործառական դասակարգման /արտադպրոցական դաստիարակություն/ «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 3 799 900/երեք միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր /ՀՀ դրամով.

6) 09.05.01.51 գործառական դասակարգման /արտադպրոցական դաստիարակություն/ «Արտաշատ համայնքի Վ.Արտաշատ գյուղի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 1 035 400/մեկ միլիոն երեսունհինգ հազար չորս հարյուր /ՀՀ դրամով.

7) 09.05.01.51 գործառական դասակարգման /արտադպրոցական դաստիարակություն/ «Արտաշատ համայնքի Մխչյան գյուղի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի բյուջեի 4511 հոդվածն ավելացնել 1 509 400/մեկ միլիոն հինգ հարյուր ինը հազար չորս հարյուր / ՀՀ դրամով.

2.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 392-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 125-Ն)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԺԵԼԱ ԳՈՒԼԳՈՒԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1. 2001 թվականից մինչև 2022 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Արտաշատ համայնքի սեփականություն համարվող սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ ենթակետերով նշված արխիվային փաստաթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:
1) Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ հանդիսացող Շահումյանի համայնքապետարանի 2002-2022թթ. արխիվային փաստաթղթեր.
2) Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում պահպանվող, Արտաշատի համայնքապետարանի իրավանախորդ հանդիսացող Վերին Արտաշատի համայնքապետարանի 2001-2015թթ. աճուրդային փաստաթղթեր, 2009-2022թթ. աշխատակազմի քարտուղարի հրամանների գրանցամատյան, 2013-2017թթ. համայնքի ղեկավարի կարգադրությունների գրանցամատյան, 2016-2022թթ. արխիվային փաստաթղթեր:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 126-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻՑ ԵՐԿՈՒ ՍԵՆՅԱԿ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ՁԵՂ ՀԱՄԱՐ» բարեգործական հասարարական կազմակերպության նախագահ Գ. Բալասանյանի 02.06.2025 թվականի Տ-6981 գրությունը և Արտաշատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բերքանուշ բնակավայրի մշակույթի տան շենքից 77 քմ և 20 քմ մակերեսներով սենյակները 2025 թվականի մայիսի 10-ից մինչև 2027 թվականի մայիսի 10-ը ներառյալ անհատույց, ժամանակավոր օգտագործման տրամադրել «ՁԵՂ ՀԱՄԱՐ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ծրագիրն իրականացնելու նպատակով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 127-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՀԵՆՐԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Վերին Արտաշատ գյուղի վարչական ղեկավար Աշոտ Ղազարյանի՝ 16 մայիսի 2025 թվականի թիվ Ա-6309 գրությունը և հաշվի առնելով Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ գյուղի Ա.Գալստյան փողոցի թիվ 33 տան բնակիչ Հենրիկ Անուշավանի Ավետիսյանի՝ 06 մայիսի 2025 թվականի Ք-5858 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Հենրիկ Անուշավանի Ավետիսյանին՝ հրդեհից այրված տարածքները վերանորոգելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 128-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9 ՏԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԱՆՈՒՇ ՍԵՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերով, հաշվի առնելով Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 9 տան բնակչուհի Անուշ Սենիկի Մանուկյանի՝ 05 հունիսի 2025 թվականի թիվ Ք-7166 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի 2025 թվականի բյուջեի 10.07.01.54 գործառնական դասակարգման (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն հատկացնել Անուշ Սենիկի Մանուկյանին՝ միակողմանի

ծնողազուրկ և հաշմանդամություն ունեցող որդու՝ Արթուր Սերյոժայի Հովակիմյանի (ծնվ.07.08.2011թ.) վիրահատության համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 129-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 12-րդ հավելվածում 1028-1030-րդ տողերի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Արտաշատի համայնքապետարանի և ԱՁ Դավիթ Բրուտյանի միջև 03.04.2025 թվականին կնքված թիվ ԱԱՄԱՀ-ՄԱԱՊՁԲ-25/40 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Արտաշատ համայնքի կարիքների համար գույքի ձեռք բերմամբ պայմանավորված՝ (Տաղավար՝ 10 հատ, միավորի գինը՝ 38000 /երեսունութ հազար/ ՀՀ դրամ), (Սեղան՝ 10 հատ, միավորի գինը՝ 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ), (Աթոռ՝ 40 հատ, միավորի գինը՝ 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ) և 1031 և 1032-րդ տողերի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ Արտաշատի համայնքապետարանի և ԱՁ Արտակ Աբգարյանի միջև 18.03.2025 թվականին կնքված թիվ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/11 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Արտաշատ համայնքի կարիքների համար գույքի ձեռք բերմամբ պայմանավորված՝ (Բազկաթոռ ղեկավարի՝ 1 հատ, արժեքը՝ 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ), (Աթոռներ՝ 2 հատ, արժեքը՝ 213000 /երկու հարյուր տասներեք հազար/ ՀՀ դրամ)՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 130-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Տալ համաձայնություն՝ Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից ծառայողական նպատակով ըստ վառելիքի նորմաների տրամադրելու վառելիք այն աշխատակիցներին, ովքեր համայնքի կարիքների համար օգտագործում են անձնական մեքենաները:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հարցը օրակարգից հանելու համար քվեարկել են՝

Կողմ-13

Դեմ-3 Նարեկ Բաղդասարյան, Արտյոմ Պետրոսյան, Սեդրակ Սարգսյան

Ձեռնպահ-2 Արթուր Մկրտչյան, Մարո Մարգարյան

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Ն որոշման 11-րդ հավելվածում 25-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ ՀՏԶՀ) միջև 2025 թվականի մայիսի 30-ին կնքված WAFT-AT-04/5 պայմանագրով գույքի ձեռքբերմամբ պայմանավորված (Ինքնաթափ մեքենա, քանակը՝ 1 հատ, մոդելը՝ Dongfeng KS DEFH3330A80 , գինը՝ 32 232 000/երեսուներկու միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար/ՀՀ դրամ)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 131-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՆՔՆԱԹԱՓ ՄԵՔԵՆԱՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Dongfeng KC DFH3330A80 մոդելի ինքնաթափ մեքենան անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ համայնքում իր իրավասությունների շրջանակներում ծառայություններ մատուցելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 132-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՆԱՐ-ԴՈՍԻ 38/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏԱՆԻ ԲՆԱՍԵՐՆԵՐԻ ԿԱՅԱՆՆ <<ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ <<ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածով և 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Նար-Դոսի 38/1 հասցեում գտնվող Արտադպրոցական կենտրոնի պատանի բնասերների կայանը (կադաստրային ծածկագիր՝ 03-001-0031-0038, մակերեսի չափը՝ 0,39021 հա) <<Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Գեղագիտական կենտրոն>> ՀՈԱԿ-ից հետ վերցնել:

2.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Նար-Դոսի 38/1 հասցեում գտնվող Արտադպրոցական կենտրոնի պատանի բնասերների կայանը (կադաստրային ծածկագիր՝ 03-001-0031-0038, մակերեսի չափը՝ 0,39021 հա) երկու տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ին՝ իր իրավասությունների շրջանակներում օգտագործելու նպատակով:

3.«Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ի հետ երկու տարի ժամկետով կնքել անհատույց օգտագործման իրավունքի պայմանագիր:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 133-Ա)*

**LUՍԵՑԻՆ**

***«ՇԻՆՏՐԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ-77 ԿՈՊՃԱՅԻՆ ԱՎԱԶՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Խաչատրյանի դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տրամադրել նախնական համաձայնություն «ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արաքսավան-77 կոպճային ավազների հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանում իրականացնելու նախաձեռնությանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 134-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԱՎԻԹ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 116/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Դ. Սուքիասյանի դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տրամադրել նախնական համաձայնություն Դավիթ Սուքիասյանի կողմից ներկայացված՝ Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ա. Խաչատրյան փողոց 116/1 հասցեում բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախաձեռնությանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 135-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի 29 դեկտեմբերի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բերքանուշ բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2025 թվականի մայիսի 26-ի թիվ 2/փ-152 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2025 թվականի մայիսի 29-ի թիվ 01/03565-2025 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել՝ Արտաշատ համայնքի Բերքանուշ գյուղում գտնվող 03-025-0019-0029 կադաստրային ծածկագրով 0,35 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ դասելով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Բերքանուշ գյուղի գոտևորման նախագծում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 136-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 13/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, Քաղաքացիական օրենսգրքի 204-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ ՆԳՆ «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի 04/06/2025թ. 100/1330 գրությամբ ներկայացված շենքի հետազննության արդյունքների տեխնիկական եզրակացությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել քանդել /ապամոնտաժել/ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Բերքանուշ գյուղի Ե.Չարենցի փողոց 13/1 շինության հասցեում գտնվող 0,35հա մակերեսով 03-025-0019-0029 կադաստրային ծածկագրով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական հողամասում գտնվող 129,46քմ մակերեսով անասնաշենքը և 36,99քմ /81,38 խ.մ/ մակերեսով պարիսպը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 137-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԵԿ ՎՐՈՒՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ***

**ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով Ն. Խաչատրյանի 04/06/2025 թվականի N ՃՀԱ/223/20115-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղում գտնվող, Նարեկ Վրույրի Խաչատրյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.1768հա մակերեսով, 03-027-0201-0042 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 138-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԵԿ ՎՐՈՒՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ուսումնասիրելով Ն. Խաչատրյանի 04/06/2025 թվականի N ՃՀԱ/223/20114-25 հայտը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղում գտնվող, Նարեկ Վրույրի Խաչատրյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1.0932հա մակերեսով, 03-027-0201-0043 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նպատակային

նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային հաշվեկշռում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 139-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶԱՏԱՐՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնք Այգեզարդ բնակավայրում գտնվող ց/ճ վ/գ պողպատե (St)DN57x3.5 խողովակով 370.62մ երկարությամբ, (St)DN76x3.5 խողովակով 24.42մ երկարությամբ, Արաքսավան բնակավայրում գտնվող ց/ճ վ/գ պողպատե (St)DN57x3.5խողովակով 475.91մ երկարությամբ, (St)DN76x3.5 խողովակով 232.97մ երկարությամբ, (St)DN108x4.0 խողովակով 25.01մ երկարությամբ, (St)DN159x4.5 խողովակով, 14.53մ երկարությամբ, Դիմիտրով բնակավայրում գտնվող ց/ճ վ/գ պողպատե (St)DN57x3.5 խողովակով 697.07մ երկարությամբ, (St)DN89x4.0 խողովակով 9.72մ երկարությամբ, (St)DN133x4.0 խողովակով 38.83մ երկարությամբ, Մրգավետ բնակավայրում գտնվող ց/ճ վ/գ պողպատե (St)DN57x3.5 խողովակով 652.17մ երկարությամբ, (St)DN76x3.5 խողովակով 368.0մ երկարությամբ, (St)DN108x4.0 խողովակով 35.43մ երկարությամբ, (St)DN159x4.5 խողովակով 13.29մ երկարությամբ, Ոստան բնակավայրում գտնվող ց/ճ վ/գ պողպատե (St)DN57x3.5 խողովակով 197.8մ երկարությամբ, (St)DN76x3.5 խողովակով 10.13մ երկարությամբ, Քաղցրաշեն բնակավայրում գտնվող ց/ճ վ/գ պողպատե (St)DN57x3.5 խողովակով 210.65մ երկարությամբ, DN133x4.0 խողովակով 11.99մ երկարությամբ, Դվին բնակավայրում գտնվող ց/ճ վ/գ պողպատե (St)DN57x3.5 խողովակով 364.06մ երկարությամբ, (St)DN76x3.5 խողովակով 39.89մ երկարությամբ, (St)DN108x4.0 խողովակով 12.31մ երկարությամբ, (St)DN133x4.0 խողովակով 11.48մ երկարությամբ գազատարները անհատույց և անորոշ ժամկետով, օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ շահագործման նպատակով:

***ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Տալ համաձայնություն՝ Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից ծառայողական նպատակով ըստ վառելիքի նորմաների տրամադրելու վառելիք այն աշխատակիցներին, ովքեր համայնքի կարիքների համար օգտագործում են անձնական մեքենաները:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Նիստին ներկա ավագանու անդամների քվեարկության արդյունքում՝ ձայների հետևյալ հարաբերակցությամբ հարցը հանվել է օրակարգից

Կողմ-13

Դեմ-3 Նարեկ Բաղդասարյան, Արտյոմ Պետրոսյան, Սեդրակ Սարգսյան

Ձեռնպահ-2 Արթուր Մկրտչյան, Մարո Մարգարյան

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 04-ի՝ «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 342-Լ որոշման 11-րդ հավելվածում 25-րդ տողի ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի կարիքների համար Արտաշատի համայնքապետարանի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ ՀՏԶՀ) միջև 2025 թվականի մայիսի 30-ին կնքված WAFT-AT-04/5 պայմանագրով գույքի ձեռքբերմամբ պայմանավորված (Ինքնաթափ մեքենա, քանակը՝ 1 հատ, մոդելը՝ Dongfeng KS DEFH3330A80 , գինը՝ 32 232 000/երեսուներկու միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար/ՀՀ դրամ)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 140-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի վեցերրորդ հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի հունիսի 25-ին, ժամը 11:00-ին:

2.Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում, հասցեն ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 62:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 141-Ա)*

Ավագանու անդամներ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆԻ ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց՝* Անժելա Գուլգուլյանը ________________